«ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ «ՇԻՐԱԿ ԿԵՆՏՐՈՆ» ՀԿ

ՀՀ, 3101 Գյումրի, Վարպետաց 176, 301 հեռ. +(374 312) 6-69-92,
+(374 91) 45-13-37
Էլ փոստ՝ infi@shirakcentre.org
Կայք՝ www.shirakcentre.org

*ՀՀ կառավարությանն առընթեր*
*անշարժ գույքի կադաստրի պետական*
*կոմիտեի նախագահ Ե. Զախարյանին*

## *ՆԱՄԱԿ-ՀՐԱՎԵՐ*

Պարոն Զախարյան

Մեր կազմակերպությունն իրականացնում է Գյումրիում ինքնակամ և փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի կառույցների օրինականացման գործընթացների մասին իրազեկող քարոզարշավ: Այդ նպատակով **դեկտեմբերի 23-ին, ժամը 12:00-ին,** կազմակերպել ենք կլոր-սեղան քննարկում (ՀԱԵ Շիրակի թեմի Սոցիալ - կրթական կենտրոնի դահլիճում. հասցեն՝ Գյումրի, Վարպետաց 176, Սբ. Յոթվերք եկեղեցու հարևանությամբ):

Խնդրում ենք մեզ աջակցեք, որպեսզի հանրությանը իրազեկելու նպատակով միջոցառմանը մասնակից դառնան Ձեր կողմից ղեկավարվող կոմիտեի համապատասխան մասնագետներ, այդ թվում Գյումրու տարածքային ստորաբաժանման, Տ.Ս. ղեկավար - անշարժ գույքի պետական ռեգիստր Արայիկ Առաքելյանը:

Կանխավ հայտնում ենք մեր երախտագիտությունն աջակցության համար:

Հարգանքով՝ «Շիրակ կենտրոն» ՀԿ նախագահ Վահան Թումասյան

Գյումրի
15.12.2010թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ
**ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ**

375023, ք. Երևան, Արշակունյաց 7,
( + (3741) 569569; 525481:
Ֆաքս + (3741) 526562

26.11.10 Ն/2.1/4985-10

Ձեր ______________ առ ______________

**<<Քաղաքական մշակույթի և համաձայնությունների**
**զարգացման <<Շիրակ կենտրոն>> ՀԿ-ի նախագահ**
**պարոն Վ.Թումասյանին**
**(ՀՀ, ք.Գյումրի Վարպետաց 176)**

Ի պատասխան՝ ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավարի 11.11.2010թ. թիվ 02/24.2/14102-10 գրությամբ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի քննարկմանը ուղղարկված Ձեր գրությանը հայտնվում է, որ կոմիտեի 16.11.2010թ. թիվ ՖԲ/2.1/4807-10 գրությամբ Ձեր բարձրացված հարցերին տրվել է պատասխան:

**Ֆ.Բաչոյան**

Կատարողներ՝
Ս.Մկրտչյան 566250
Մ.Ադամյան 560912